



Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Դաշտ, Մ. Մաշտոցի 34  
Էլ. Փոստ՝ [dasht.armavir@mta.gov.am](mailto:dasht.armavir@mta.gov.am),  
Հեռախոս՝ +37494404402, +37495404402

Թիվ << 65 >>

<< 20 >> - 07 - 2015թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ,  
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՅՐԱՄԱՆՅԱՆԻՆ

**Ֆարգարժան պարոն մարզպետ**

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությունը և քաղվածք Դաշտ գյուղական համայնքի բնակիչների ընդհանուր ժողովից՝ կայացած 16.07.2015թ.:

Առդիր՝ 8 բերք:

Դաշտ գյուղական համայնքի ղեկավար՝



Հ. Պետրոսյան



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ

16.07.2015թ.

Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու և տեղական ժողովրդավարությունն ամրապնդելու նպատակով, 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնում եմ հաշվետվություն Դաշտ գյուղական համայնքի բնակչությանը:

Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքն ուն մոտ 1020 բնակիչ՝ այդ թվում նաև ժամանակավոր բնակվող անձինք, որոնցից հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով, իսկ ոչ գյուղատնտեսական աշխատանքով՝ բնակչության մոտ 10%:

Համայնքը գազաֆիկացված է մոտ 90%-ով, իսկ մնացած 10%-ի համար այժմ կազմվում է նախագիծ առաջիկայում ամբողջովին գազաֆիկացնելու համար: Ոռոգման ջրի մատակարարման հետ կապված կան որոշակի դժվարություններ: Խմելու ջրի ջրամատակարարումը շուրջօրյա է:

*2015թ. 1-ին կիսամյակի ընթացքում.*

---

- կայացել է ավագանու հերթական և արտահերթ թվով 05 նիստ և ընդունվել է ավագանու թվով 24 որոշում,
- ընդունվել է համայնքի ղեկավարի թվով 02 որոշում,
- արձակվել է համայնքի ղեկավարի թվով 08 կարգադրություն,
- համայնքի ազգաբնակչությանն է տրամադրվել թվով 253 հատ տարբեր բովանդակությամբ տեղեկանքներ,
- Մուտք է եղել թվով 98 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և որոնց ընթացք է տրվել,
- Ելք է եղել թվով 58 պաշտոնական գրություն,
- Մուտք է եղել թվով 6 դիմում,
- Ամսեկան և տարեկան հաշվետվությունները ժամանակին է ներկայացվել մարզպետարան, սոցիալական ծառայություն և վիճակագրական վարչություն:
- Կազմակերպել է անասնազլխաքանակի հաշվառում և ներկայացվել է վիճակագրական վարչություն, ժամանակին կազմակերպվել է հակահամաճարակային պատվաստումներ:



Համայնքի կենտրոնական հրապարակը, որտեղ կան նորատունկ ծառեր  
և տեղադրված է խաչքարը, պարբերաբար ոռոգվում և խնամվում են  
գյուղապետարանի աշխատողների կողմից:

Խաչքարի տարածքում անցկացված է գիշերային լուսավորություն:

Կատարվել է գիշերային լուսավորության ցանցի վերանորոգում և ընդլայնում:

Համայնքի զբոսայգու սալիկապատման աշխատանքները ընթացքի մեջ են:

Մատչելի գներով ձեռք է բերվել պարարտանյութ և դիզ. վառելիք,  
որը բաժանվել է բնակիչներին:

Համայնքի մշակույթի տանը գործում է ազգագրական պարի խմբակ:

Պարի խումբը և դպրոցի աշակերտները տոնական օրերին հաճախ են  
համատեղ կազմակերպում միջոցառում և հանդես գալիս մշակույթի տանը:

Մշակույթի տանը գործում է համայնքի գրադարանը, որտեղ առկա է մոտ  
4000 կտոր գիրք, որից օգտվում են ընթերցասեր բնակիչները, ինչպես նաև  
համայնքի ուսանողները:

Այժմ էլ իրականացվում են ակտիվ աշխատանքներ Դաշտ համայնքի  
ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի կողմից Դաշտի  
գյուղական համայնքի զարգացման համար:

ԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎՈՐ



ԲՆԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ